




ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 167

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԳԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԵՍ ԵՐ
ԶՆՆԱԼ
ՏՈՒՐԻՆ

ԵՒ
ԿԵԱԼԻ



ՏՕՒԱՅՈՅՑ

Հոկտ.	4	† Կիր. ղկ.	Դ. Զկնի խաչին:
	5	Բշ. աճ.	Սրբոյն Փոկասու հայրապետին եւ Ե- րանոսի հետեւողին առաքելոց:
	6	Գշ. ակ.	Ս. Կուսանաց Թեկղի եւ Վառվառեայ:
	7	Դշ. բճ.	Պահոց:
	8	Եշ. բկ.	Ս. Պանդայեոնի բժեկին եւ Երմոդեայ բահանային եւ Եպրաֆեսայ կուսին:
	9	Ուր. գճ.	Պահոց:
	10	Շք. գկ.	Ս. Կալիստոսոսի եւ ԽԹ. վկայիցն եւ Ղուկիանոսի բահանային:

Լոյս տեսաւ Բացող քանաչի Ֆրանսերէնի պատկերազարդ-
գրքոյլը, բոլորովին նոր մեթոտով եւ առանց վարժապետի իսկ
կ'ուսուցանէ Դադիերէն Այբուբէնը, ընթերցանութիւնը, զրու-
ցատրութիւնը, վայելչագրութիւնը, ուղղագրութիւնը, բառագի-
տութիւնը ու քերականութեան տարրական մասը գրեթե միջո-
ցաւ կը բացատրէ: Հեղինակ՝ Յովհ. Վրդ. Նալպանտեան: Դիմել
Պալենց Դրատան, Չագմագճըլար. Գին՝ 3½ դահեկան:

Հեղինակը նոյն մեթոտով հրատարակեց. Միսէմեշուսույր
շխաանը օտմանի, րէսիւնի գիրքը: Գին՝ 2 դահեկան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Զորրորդ տարի 3 Հոկտեմբեր 1914 թիվ 167

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
ռունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն օրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները:»

Նամակ կարգ. Մերի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թերզեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1913, ընդ 60780 բուսմամբաւ:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ.

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆ ԿԱԹՈՂԻԿԷՅՑ

Երանելոյն Պետրոսի աթոռը բազ-
մեղնուս պէս, գիտնալով այսօր մեծ
պաշտօնի մը անբաւական ըլլալն իս, խո-
րիկ յարգութեամբ երկրպագեցին խո-
հուրդին նախախնամող Աստուծոյ որ մեր
անձին խոնարհութիւնը այս վսեմ աւ-
սիճանին բարձրացոյց: Թէեւ զգացինք
զՄեզ գորկ ու քափուր պահանջնաւ
հանգամանքներէ, սակայն վստահօրէն
յանձն առինք Բարձրագոյն Քահանայա-
պետութեան վարչութիւնը, ապաւինե-
լով միայն աստուածային բարութեան:

Եւ հաւնոգումս ըլլալով թէ կարելո՞ւ ուժն
ու օգնութիւնը պիտի ընդունինք Անկէ
որ այսպիսի ծանր պաշտօնի մը բեռը
մեր վրան դրաւ:

Սակայն առաջին անգամ որ այս
Առաքելական Աթոռին բարձունքէն սկ-
նարկն իս նետեցինք Տիրոջ մեր խնամ-
բին յանձնած հօտին վրայ, սոսկումով
եւ դառն վիշտով լեցունեցանք, տեսնելով
այն ահեղ պատերազմը որ Եւրոպայի մեծ
մասը հորի եւ սուրի մասնած է եւ
Քրիստոնէից արիւնով համակ կարմիր
ներկած է: Արդարեւ Յիսուս Քրիստոս,
բարի հովիւր, որուն տեղը կը բռնենք
Եկեղեցւոյ վարչութեան մէջ, Մեզի յանձ-
նած է զառներն ու ոչխարները, որպէս

զի անխտիր զաւելնք միեւնոյն հայրենի գրով ու գորովով ընդգրկենք: Եւ ըստ որում, Տիրոջ օրինակին համեմատ, պատաս ըրչալու ենք, ինչպէս որ ենք, մեր կեանքն անգամ տալու անոնց փրկութեան համար, հաստատապէս որոշեցիմք ընել ինչ որ կրնամք աշխատել զժխել աղէտի մը վախճանը փութացնելու համար:

Առ այժմ, դեռ եւս վիճակաւորներու շրջաքերական նամակներ չորկած, ինչպէս սովոր են ընել հոռութեան Քահանայապետները իրենց Քահանայապետութեան սկիզբը, յենք կրնար յրկնել Մեր սուրբ եւ անմահ յիշատակի արժանի Նախորդին, Պիոս Ժ. ի խօսքերը. գորով աշտատակալի պատերազմին առաջին դրոյիսը ընելու պէս իր հովուական հոգածութենէն եւ մարդկութեան նկատմամբ ունեցած սէրէն շարժած արտասանեց իր մահաւերժ ջրբոսներով: Ուստի, երբ Մենք իսկ, աշխատելու եւ բազում ինչ ինչ վերցնալով, եռանդաւոր պատասաններ կ'որոշենք Աստուծոյ, ջերմապէս կը յորդորենք Եկեղեցոյ թոյր գտակները, մանաւանդ սուրբ նուիրապետութեան անդամները, ինչպէս ըստ այնքան բախանաւորով Մեր Պատուական Նախորդը. որ սակեմք անդադար աշխատել, իրենց ջանքերը կրկնապատկեն. թէ՛ առանձնական խոնարհ աղօթքով, թէ՛ հրապարակական հանդիսաւոր պաշտամաններով խնդրենք Աստուծոյ, ամեն բանի իշխանէն եւ գերագոյն Տիրոջմէն, որ յիշէ իր որդւորութիւնը եւ մեկդի ընէ վերջապէս իր բարկութեան պատուհասը, որով ժողովուրդներու անօրէնութիւնները կը պատժէ:

Հաճի՛ մեզի զօրաւիզ եւ օգնական ըրչալ եւ մեր փառաբաններուն կատարման նպատակը Աստուծաւոր Կոյսը, որուն երանաւէտ ծնունդը, աշտատակ սօսախրմքութեան առարկան, խաղաղութեան արշալոյսի մը պէս փայլեցաւ վաստակաւոր մարդկութեան վերելք, Ինք որ պիտի ծնաներ Զանկիւյ, որով Յաւիտենական Հայրը ուզեց հաշտեցնել աւելնալ. «Աստ խաղաղութիւն արեւմտ Խաչին իւրոյ որ ինչ յերկրի եւ որ ինչ յերկինս» (Կորն. Ա. 20):

Դաշով Անոնց որ կը վարեն ժողովուրդներու ճակատագիրը, բախանաւոր ինչ կ'աղայենք իրենց եւ կը պաշտօնակոր մարդկային ընկերութեան փրկութեան համար տեղի տան զքաջի զգացումներու, եւ կենան իրենց հակառակութիւններէն: Թո՛ղ նկատի առնուի թէ ո՛րքան թշուառութիւններով եւ սուգերով ինչ է արդէն աշտ մահկանացու կեանքը, եւ հարկ լիւր զայն աւելի եւս թշուառացնելու եւ դառնացնելու: Բաւական չէ՛ն կուտակուած փշտակները, հերիք չէ՛ թափուած արիւնը: Թո՛ղ փութան ձեպեն հաշտուիլ, ձեպ ձեպի տալ: Այսպէսով Աստուծոյ պիտի ընդունին փառաւոր վարձատրութիւն մը թէ իրենց եւ թէ իրենց ժողովուրդներուն համար, եւ արեւոյ խաղաղական ընկերութեան առջեւ մեծ արդիւնք պիտի շահին: Վերջապէս մեզի, որ մեր Քահանայապետութեան սկիզբը, աշխատել անեղ խոռովութիւններու հետեւանով շատ ծանր դժուարութիւններու կ'ենթարկուիմք, պիտի տանք, մեր աղաչանքին համարապատասխանելով, ամենաբարեւոր եւ ամենապատկառի զոհունակութիւն մը:

Տրուած Վասիկանեան Պալատէն 1914 Սեպտ. 8ին, Ս. Կուսին Յճնդեան օրը:

ԲԵՆՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ. ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՁՐՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱԼԷՊԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ

Բ.

1. Շատ օգտակար և հարկաւոր իսկ է գիտնալ թէ ո՛ւմ պէտք է վիճակի դաստիարակութեան գո՛նէ վերին հրաւորութիւնը: Որովհետեւ տղայոց կըրթութեան այս ահաւոր մրցումին մէջ, կըքերու բռնն փոթորիկներով կը տարուին մանաւանդ անոնք, որ ամէն գնով կ'ուզեն տիրել երիտասարդ տարրին վրայ, որով և ամէն կանոն և օրէնք, որքան ալ սրբազան ըլլան անոնք, կ'արհամարհեն ու կ'ոտնակոխեն, և իրենք նորամուտ և բռնազբօսիկ սովեստութիւններով կ'ուզեն տիրել, տիրապետել, հրամայել:

Դաստիարակութեան պարտքը, պաշտօնն և իրաւունքը, և անոր գերազոյն հսկողութիւնը կը պատկանի այն իշխանութեան միայն, որուն յաստուածակոյս կողմանէ աւանդուած է: Արդ Բրիտոս Տէրն մեր իր առաքեալներուն և անոնց յաջորդներուն միայն տուաւ այս իշխանութիւնը. «Ուսուցե՛ք». Սորովեցուցե՛ք ամենուն. և Հոգին Սուրբ զանոնք դրաւ «Տնաւոյ», վերակացուներ Աստուծոյ ժողովրդեան. և անոնց հրամայուեցաւ «Արածել» ոչխարները, գառնուկները.

անոնք բարի հայրերն են, և պիտի «ջամբեն» առաքելական կաթը և հաստատուն կերակուրը, պիտի պահեն աւանդը. և անոնց պարտքն է սխալ ուսուցումը արգելուլ, թիւր վարդապետութիւնները խափանել, զանոնք սորվեցնելու յանդգնողները դատապարտել և բաժնել ի միութենէ Ս. Եկեղեցւոյ:

Կը զգամ թէ անմիջապէս դէմն ի վեր պիտի ուզեն նետել այն առարկութիւնը, որ հասարակաց տեղի մը եղած է, ինչպէս կ'ըսուի տրամաբանութեան մէջ, Եկեղեցւոյ թշնամիներու Պիտի ըսեն. «Բայց ատիկա պարզապէս տգիտութիւն է կամ խաբէութիւն. այս հրամանները, պատուէրները, պաշտօնները կը հային միայն հաւատոց ուսուցումին և ո՛չ թէ աշխարհական ուսուցումին, գիտութեանց, պատմութեան, փիլիսոփայութեան, ևն. ասոնք կրօնքի հետ, որով և Եպիսկոպոսաց հետ բնաւ առնչութիւն չունին. ուրեմն»:

Երեւութաբար շատ գեղատեսիլ (speciosa) է ձեռնարկութիւնը. սակայն գեղեցիկ դէպքին տակ կը ծածկէ ժանտ թոյնը, որով զաշխարհ կ'աւերէ: «Զի՛ կայ մեռ եւ քո՛» կ'աղաղակէին դուերը Յիսուսի դէմ, երբ զանոնք կը հալածէր մարդերէ. Ի՛նչ կ'ուզես մենէ, ինչ կը խառնուիս մեր գործին. հանդարտ թո՛ղ զմեզ, մի՛ վտարեր զմեզ... Մինչեւ իսկ կ'աղաչէին որ թոյլ տայ իրենց մտնել խոզերուն մէջ, քանի որ չուզեր որ մարդերը խոզերու փոխարկեն... Պատմութիւնը կրկնութիւն է, կ'ըսեն. այսպէս, դժոխքի տիրոջ քաղաքականութիւնն ալ միշտ նոյն եղած է:

Իսկ վերի առարկութեան ուղղակի

պատասխանելով կ'ըսենք նախ. այդ մարդիկը անոր համար կ'ուզեն տիրել դպրոցներու, որպէս զի, — ուշ դրէ՛ք պատճառին, կը ստորագծենք մասնաւոր, — որպէս զի տղայոց խղճին, սրտին և հոգւոյն վրայ տիրեն և անոնց սրտէն, խղճէն և հոգիէն հանեն հաւատքը, կրօնքը, բարոյականը, մանաւանդ՝ կաթողիկէութիւնը. ահա՛ իրենց վախճանը։ Եւ այս բանս բացայայտ ստուգուած է ո՛չ միայն ի Գաղղիա, ուր դպրոցներէն վտարեցին մինչև իսկ Աստուծոյ սրբազան անունը, այլ նաև մեր մէջ, ուր կրցան տիրել կուսակցական անկրօնները կամ անկրօն կուսակցականները։ Հին արուեստ է այն փաղաքշանքը՝ թէ չպիտի դպչին կրօնքի և հաւատալեաց. կամայ կամաց կը դործեն՝ միերոպը, թոյնը, կրակը, մինչև յանակնկալս և անդարմանելիորէն յառաջ բերեն հիւանդութիւն, մահ, հրդեհ. ա՛յսպէս է նաև ի բարոյականին։

Երկրորդ՝ կ'ըսենք. բացարձակապէս սխալ է, սուտ է, խարէական է թէ՛ ըլլայ գեղեցիկ դպրութիւնը, ըլլայ փորձառական և տեսական գիտութիւնը, առնչութիւն չունենան բնաւ հաւատքի, կրօնքի, բարոյականի հետ. բացարձակ և էական առնչութիւն ունին. նախ՝ որովհետեւ հաւատքը կը բնակի յանկեղծ սրտի և խորհող մտքի մէջ. արդ այն ամէն բան որ սրտի և մտքի հետ առնչութիւն ունի, հարկաւորապէս առնչական է նաև հաւատքի հետ. հետեւաբար ո՛վ որ յաստուածուստ պաշտօն ունի հաւատքի, պաշտօն ունի նաև դրպութեանց և գիտութեանց վրայ։ Ապա ո՛րք է համոզուիլ, — և համոզուելու

համար բաւական է տեսնել, — որ՝ այն ամէն գրքերը, դպրութեանց՝ օր. հ. բանաստեղծութեան, գրականութեան, պատմութեան, ևն., գիտութեանց՝ օր. հ. բնագիտութեան, տարրալուծութեան, փիլիսոփայութեան, աստղագիտութեան, մինչև իսկ ուսողութեան և մասթեմատիկայի, այս ամէն դասու գրքերն են, կ'ըսենք, որք առ հասարակ կը բովանդակեն ահաւոր մոլորութիւններ, երբ զերծ կը մնան հոգեւոր իշխանութեան հսկողութենէն։ Բաց աստի՛ անկրօն կամ անտարբեր ուսուցիչներն ալ՝ կենդանի բանիւ բերանոյ, սրտերու մէջ կը սերմանեն այդ մոլորութիւնները։ Ուրեմն Ս. Եկեղեցին յաստուածուստ իրեն տրուած այս իրաւունքէն բնաւ երբեք չի կրնար հրաժարիլ։

Ասոր համար է որ Սիւնհոդոսը կ'ուսուցանէ այսպէս. ¹ «Վարժարաններու մէջ ուսուցումը կարելի չէ բաժնել կրօնական դաստիարակութենէ։ Եւ քանզի հաւատացեալը կրօնական դաստիարակութիւնը՝ վերաւոր վախճանն է Եկեղեցւոյ, .. ուստի սակե կը հետեւի, որ Եկեղեցին ո՛չ միայն օսար եւ անմասն չէ վարժարաններու վարչութենէն՝ որոնց մէջ իր հաւատացեալները պիտի կրթութիւն, այլ եւ ինքն իրաւունք ունի վարժարաններ կանգնելու, կանգնուածները վարելու, եւ արքուն հսկողութեամբ եւ խնամքով զգուշացնելու հաւատքի դէմ մոլորութիւններէ, եւ իր սեպակական ճոխութեամբը ֆրիսոնէական ուղիղ շարդի մէջ առաջնորդելու»։

Հետեւաբար հոգեւոր իշխանութիւնը իրաւունք ունի հսկելու ո՛չ միայն դրպ-

¹ Տիտղոս Ը. Գլուխ Ա. համար 381։

րոցներու ծրագիրներուն, դասագրքերուն, բարեկարգութեան, բարոյականի և կրօնական ուսուցման վրայ, այլ նոյն իսկ ուսուցիչներուն դադափարին և բարոյականին վրայ եւս. ահա ի՛նչ կը նշանակէ Քրիստոսի Տեառն մերոյ «Ուսուցեմք»:

2. Սակայն այսչափ մեծ և կարեւոր պաշտօն մը՝ բնականաբար իրեն հետ կը բերէ մեծ և ծանր պարտք, մանաւանդ եպիսկոպոսաց համար, անդադար մեծ ուշադրութեամբ զբաղելու տղայոց կրթութեան գործին հետ, դպրոցներու հետ: Իրենց հովուական պաշտաման ամենէն կարեւոր, ամենէն փափուկ, ամենէն ազնիւ և պատասխանատու գործը՝ դպրոցներուն գործն է անշուշտ. այլ ամենէն մխիթարականն, ամենէն բեղմնաւորը, ամենէն աւելի ապագայ խոստացողն ու թէ՛ աստ թէ՛ ի հանդերձելումն վարձուց արժանաւորն է այն: Ո՛վ որ դպրոցներն ունի, ունի նա ժողովուրդները. ով որ կը պահէ ու կը ծաղկեցնէ դպրոցները, նա կը պահէ ու կը պերճացնէ կրօնքը. նա Քրիստոսի ճշմարիտ փոխանորդն է, նա քաջ հովիւ, մեծ վարդապետ, խղճամիտ աւանդապահ և հաղարապետ է Տանն Աստուծոյ. նա եպիսկոպոս է ըստ սրտին Աստուծոյ:

Ամենամեծ Սուրբ եպիսկոպոսներ այս բանիս զոհեցին իրենց ջանքը, հսկողութիւնը, տքնութիւնը: Ս. Կարալոս Պորրոմեան մը, Ս. Փրանկիսկոս Սալէզեան, Ս. Ալփոնսոս Լիգուորեան զարգացուցին այս գեղեցիկ ճիւղը: Եւ հիմա Եւրոպիոյ, մանաւանդ Գաղղիոյ, Բեզգիոյ եպիսկոպոսները իրենց բոլոր հոգն

ու խնամքը կեդրոնացուցած են դպրոցներու վրայ, անհաւատալի ճիգեր թափելով կաթողիկէ մանկութիւնը ազատելու համար անկրօններու, անբարոյականներու ճիրաններէն, հոգեւոր և մարմնաւոր դժբախտ կորստենէն:

Եւ, Տէ՛ր Աստուած, ի՛նչ հրաշալիքներ կը գործեն: Եռանդը և սուրբ վախճանի համար սեւեռեալ գաղափարը և անդրդուելի կամքը և շարունակուած զոհողութիւնը յիրաւի հրաշքներ կը գործեն:

Ուրիշ յօդուածով մը պիտի կարենանք աւելի պարզել այս կենսական կէտին յարակից պարագաները:

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ ԴԷՄ

(1827 — 1830)

Ինչպէս վերը ըսի, Հայք շատ բան ընել տուին տէյի ահա մէկ ըրածնին տահա. Հայուն մէկը Թէպօիլ քրյաֆէթով Պէյօղլու: Աստուածածնայ ժամը կ'երթայ, աւագ խորանին քովը կը սպասէ որ Համուրճի օղլու քահանան պատարագի ելած ժամանակը չիշով զարնէ սպաննէ, քահանան ալ չգիտնալով կու գայ խորանը կ'ելլայ կը սկսի պատարագը. քայք քահանան կը զիտէ աս մարդը, կը նայի քի թէքէն մարդ չէ և կ'իմանայ քի բան մը կայ. անիտէ պահարան ճիւղ և անտեղի խրովաթին հապար կու տան քի դան բռնեն. աս բանս Հայը տեսնալուն պէս որ զինքը պիտի բռնեն. անիտէ կը փախչի, շատ բնութեցին չի կրնային բռնել:

Մայիս

Յուլիս 6 Ուրբաթ. — Աս օր իրիկուան մօտ յանկարծ տէրութեան պարութիւնն ան փոքր կեցաւ, երկինքը ելաւ, երեք հարիւր հոգիէն էվէլ զայ հղաւ և պարութեի պաշի Սիմօնին տղան ալ մէջը մտաւ: Սիմօնին կնիկը որ տղուն մարն էր հինգշաբթի իրիկուն իրենց տունը ուղղափառաց հալածանքին վրայ խօսք կը բացուի, կը դառնայ աս կնիկը կ'ըսէ նաաող մարդկանց. ան խրատար աս բանիս զայրէթ ունիմ քի տախի մէկ շապիկս մնայ նէ կը ծախեմ կու տամ թէք աս քաթուղիկներուն հախէն գանք: Էրթէսի օրը զաւկին վրայ Աստուծոյ բարկութիւնը հասաւ, բայց չիմացան քի ինչ էր աս եղածը, Աստուած էր աս բանը ընողը տէյի: Տեսելը լաթովը թաղել տուաւ քի մարտիրոս և նա հասակ է սղաս տէյի:

Ասը ստոյգը աս է, ինչ էր բռնկելուն սէպէպը, աս մեռնող տղան քիչ մը չալըն բլլալով, ան տեղաց զապիթը զասոնք ըլլալով օր մը առաջ քանի մը ալլազգ ծեծել տուեր է. ծեծ ուտողին մէկը ոխը սիրտը պահելով նետիչ մը մեռնողին կը սրխմէ, տղան կը զարնուի, զարնողը գիտէ քի ինքն ալ պիտի մեռնի զարնելովը, նետիչ մըն ալ պարութիւննային մէջը կը սրխմէ ինք ալ, զամէնքն ալ միատեղ երկինք կը հանէ: Տէրութիւնը իրաւ ան տեղի գեղերը աս մարդոցը ձեռքը տուեր է կառավարութիւնը, բայց չիտակը իմանար նէ հիմա հէլպէթտէ, պարութիւննէլի Սիմօնը հէմ կը գլխատէր, հէմ ապրանքը զապիթը կ'ընէր: Բայց Հայոց ձեռքը ամէն ուժը ըլլալով անիտէ արքային և տէրութեանը այսպէս հասկցուցին կայծակ ինչիւրէ անկից բռնկեր է տէյի: Պէզճեանն էր աս ձեւը տուողը աս բանիս:

Այս միջոցս Սէլիմ Մէհմէտ բաշան էր եպարքոս, տէրութեան սեփիր ըլլալով օրտուով գնաց դուրս, յետոյ ազլ ըրին, կէլի Պօլու եկաւ նստեցաւ, զասուր տեղը էվէթը նաղրի Խիւլիւսիւ Ահմէտ էֆէն խայմախամ ըրին, աս մարդս շատ բան հասկցաւ էվէթը նաղրութեան ժամանակը, և շատ մարդու ալ կ'ըսէր, մի մոմտաք Աստուած ողորմած է ըսելով կը միտիարէր, ու հայոց ալ դէմ

աս եղած բաներէն սիրտը ոխ ունի, բայց յետոյ հայոցմէ ստակ ուտելով փոխվեցաւ:

Ինչպէս որ առաջ ըսի աս մարդուս իհարէ եղած էր քանի մը ստակ բռնողի գործքերը, հիմա պէտք էր որ ձգէ. զասոնք շատ աղաչանք ըրին ըսելով մեզ չի ձգէ ուրիշ մարդու ձեռք, մենք իրեն ենք, ինք նայի և հիմնէթոփ ալ մեզի ալ լաւ կ'ըլլայ ըսին իրեն մէկ մարդուն բերնովը. բէք աղէկ աս զասոնք չեմ մոռնար. հէմ չեմ ուրիշին ձեռքը ձգիր հանդարտ ըլլան ըսելով իր մէկ մարդուն իհարէ ըրաւ, որ զաս մարդոց գործքերը տեսնայ. իրաւի աղէկութիւն կ'ուզէ, բայց Ֆրսանթ չունի ձեռքը և աս մարդուս առաջի գործքը աս եղաւ որ հացի նիզամի ետեւէ ինկաւ և մէկ օր մը թէպիւր եղաւ, մէկ հացի փռան վարպետ մը կախեց և շատ տէգլեհախտարներու ալ ականջ քամել կու տար, աս բանիս համար հայք միշտ կ'ըսէին թէ աս մարդս քէշ մարդ է, զէրէ իրենց դպչելուն համար:

Յունիսի ամսոյն մէջ Պէզճեան Յարութիւնի թէթիպովը եղաւ, ըսաւ քանի մը հոգիին ծածուկ, հայոց ժամը գացողներէն ու չի գացողներէն հինգ տասը հոգի բարութալը մարդիկ երթան Պատրիարքարանը, պատրիարքէն խնդրեն էյամ մը մէօնէթ որ աս սիւրկիւն ըլլալը դադրի, և ամէն մարդ ալ միջոց ունենալովը մտածէ հասկնայ ինչ բան է աս որ կ'ըլլայ կոր, ամէն մարդուն խելքը գլխէն դուցեր է, զէրէ ամէն մարդ սիւրկիւն ըլլըվիւր մտածելով, աս սէպէպիս համար մեզի միջոց տալովը, ամէն մարդ ժամանակ ունենայ ինքը զինքը գտնալու և եղածը գացածը հասկնայ, աս ճամբով գացէք աղաչեցէք:

Բէք աղէկ ըսին ան մարդիկ իրեն, յետոյ երթալու եղող մարդիկ խորհուրդ ըրին իրենց մէջը, չունքի ըսէնք քի ժամ գացող ու չի գացողք միատեղ պիտի երթան, ժամ չի գացողք ըսին, չըլլայ քի աս մէկ տիւպարա մը ըլլայ, մենք մեր բերնովը իմանք, սողրա մեզ սրնըշտըմը ընէ պատրիարքը, դուք ինծի խօսք տուիք տէյի, ասանկ ըլլալով հարկ եղաւ. աս բանն առջի մարդիկը

երթալու Պեղծեանին հարցնելու, թէ յետոյ սուտ բան մը դառնայ նէ, և մենք ժամ գացեր ենք, մէկալնոնց համար աս էյամը պիտ որ ըլլայ, յետոյ ան մարդիկը չերթան նէ պատրիարքը մեզմէն մի բնութէ պիտոր. ըսաւ Պէզճեանը ես ձեզի գտցէք ըսի ձեզի բան հարցնող չի կայ. մի՛ վախնաք:

Էլան աս մարդիկը գացին պատրիարքաբանը որք են այսօրքիք: — Աչճի օղը Կաբապետը, Մէրամէթճի օղը Յուսէփը, Փուլճի օղը Յուսէփը, Տրապիզոնցի Մինասեան Պետրոսը, Ապտիւլլահ օղը Հիւմրիզը, Սամանճի օղը Անտոնը, Ազնաւոր օղը Քիւլիւք Գէորքը ևն. ևն.:

Ան օրը պատրիարքը հոն չէր Իւսկիւտար գացեր էր. Պէզճեան Յարութիւն աղան հոն գտնուեցաւ, վէքիլը ըսաւ գացողներուն բարի եկաք, հազար բարով. բայց ի՞նչ է ըսելիքնիդ, գացողներէն մէկը ըսաւ վէքիլին. Հայր սուրբը կ'ուզէինք տեսնալ, բայց մանի չէ հրամանոցդ կը զուրցենք և հրամանքդ ալ մեր կողմանէն Հայր սուրբին իֆատէ ըրէք և ամիրային ալ հոս գտնուիլը շատ աղէկ եղաւ. ասորվան օրս եկանք հոս կը խնդրենք հայր սուրբէն որ մեզի մէկ էյամ մը միջոց տրուի, ամէն մարդ իմանայ ըսելիքնին, Պէզճեանը կ'ըսէ վէքիլին. հայր սուրբ ես աս բանիս քիչ մը տեղեակ եմ, ասոնց կողմանէ ես կը զուրցեմ հրամանոցդ, սկսաւ այսպէս. Հայր սուրբը հոս չէ հրամանքդ լսէ ասոնց խնդիրքը, ու անոր ըսէ, և ես ալ վաղուան օրս պիտի տեսնամ կը զուրցեմ. աս մարդիկը ասուր եկան ազգին կողմանէ մէկ էյեամ մը միջոց կ'ուզեն կոր որ ամէն մարդուն խելքը գլխէն գացեր է. միջոց ունենալովը մտածէ, հարցնէ, իմանայ, ասանկ սիւրկիւն ըլլալէն ինչ օգուտ կ'ըլլայ, մտածեն աս միջոցիս մէջ ևն. ևն.։ Աս բանը ըսէք Պատրիարքին ան ալ զբանը եախօս պէտք եղած տեղը ըրծա ընէ քի աս միջոցիս մէջ սիւրկիւն չըլլայ, ահա ասոնց խնդիրքը այս է, վէքիլն ալ խիստ բարի ըսելով քանի մը խրատական բաներ ըսաւ, յետոյ գացողները անկից ետ դարձան, կրնամ ըսիլ քի աս բանը քանի մը հոգեոց համար ընել տուաւ:

Պէզճեանը, ասկից վերջնալ շատ աշխատեցան ընելու բայց Աստուած ալ ընել չի չտուաւ:

Աս միջոցիս մէջ և առաջ ալ քաթօլիքներէն որ հայոց կողմը գնացին, ընդդէմ ուղղափառաց շատ խօսքեր ըսին և ալ ըրին, շատ մարդու սեպեպութիւն տուին չարչարելու, հիմէն Աստուած դարձ տայ անոնց, և հայոց ալ գէշ չըսենք, Աստուած հոգիներուն աչքը բանայ ու լուս տայ որ իմանան ճշմարտութիւնը ի՞նչ է:

Տասնը հինգ օրէն վերջը պատրիարքը կանչել տուաւ առջի գացող էյամ մը միջոց բազումները, անոնք ալ կրկին ըսին, պատրիարքը ուզեց կրճի պօճի ընել, բայց գացողները ըսին քի Յարութիւն ամիրան ալ հոն էր, քանի մը օրուան միջոց չուզեցինք մէկ էյամի խօսք եղաւ, պատրիարքը նայեցաւ քի բանին մէջը Պէզճեանին անունը կայ կէօյա չիտէ եղեր Պէզճեանին ան օրը Պատրիարքարանը գտնուիլը, երբոր ըսին նէ, ես աղան ալ ան օրը հոս էր մի ըսելով կրկին էյամի խարար սուլին ետ դարձան:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

ԳՐԲ Ա.—ԳԼ. ԻԳ. —Մանուկ մտածութեան վրայ)

(Շար.)

Յոյսդ մի՛ դնե՛ր բաւեկամաց ու մեծամտաց վրայ եւ փրկութիւնդ մի՛ յաւադիր ապագայի. որովհետեւ կարծածե՛ր աւելի շուտ պիտի մոռնան գիեղ ծարրիկ:

Լաւ եւս է հիմա՝ քանի որ տեսնե՛ս, կանխատես ջղալ եւ ի՞նչ մը բարի գործեր համարելի, քան քի ուրիշներուն օգնութեան վրայ յոյս դնել:

Եթէ դու հիմա տեղի համար չես հոգար, վերջը ո՞վ պիտի հոգայ գիեղ:

Հիմա յոյժ անգին ժամանակ է:

Հիմա եմ փրկութեան օրերը, հիմա ժամանակ ընդունելի:

Բայց, աւա՛ղ, որ այս ժամանակը ուրիշ օգտակարացի չես գործածեր, որուն մեջ կրնաս աղիւնեաւորել ինչ որ արժանի ընէ գիեղ յաւիտեանայիս ապրելու:

Ժամանակ պիտի գայ, երբ, որ մը կամ նոյն իսկ ժամ մը պիտի բաղձաս զեզ ուղղելու համար, եւ չեմ գիտեր թէ արդեօք պիտի տուէ՞ ինքի:

ՍՈՒՐԲ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ

Նախահայր արեւմտեան վանականներու

Սուրբ քահանայ մը, ժողովրդապետ, ըստ աւանդութեան, Մոնտէ Պրէկլարոյ կոչուած առանին, որ Սուրբին բնակած անձաւէն չորս մղոն հեռու է, Զատնական համար ինքիբեմ ճաշ պատրաստել տուած էր: Յիսուս տեսիլքի մէջ անոր երեցացւաւ եւ ըսաւ. «Իմ ծառաս անօրութեան կը մննի անձաւի մը խորք, եւ դուն ինքի ախորժանամ կերակուրներ կը պատրաստես: Այս ձայնին վրայ քահանան կ'ելլէ եւ իր սեղանին համար պատրաստուածը առնելով ճամբայ կ'իյնայ երթալու անժամօթ Սուրբ փնտռելու: Եւ զանկող գտնելով կը հրաւիրէ որ Մեծ-Պահօքի ծովը լուծէ փրկչին Յարութեան հրաշափառ տունին օրը: Կամայ կամայ մեր սքանչելի Մենակեացը սկսաւ յայտնուիլ. եւ հետզհետէ շրջապահներէն շատերը սկսան իրեն այցելութեան գալ. եւ ապրուստի համար պէտք եղածները անոր բերելով, անկէ կ'առնուին աւելի պատուական կերակուր մը, այսինքն Աստուծոյ խօսքը:

Սուրբ Բենեդիկտոս օր մը սասանայի եւ մարմնայ կողմէ սոսկալի փորձութեան մը ենթարկուելով՝ մօտ էր իյնալու եւ առանձնական կեանքը լքելու, երբ մօրենիներու եւ փոքրերու մէջ նետուելով յաղթեց փորձութեան: Անկէ ետքը հրեշտակային մաքրութեամբ մը օժտուեցաւ, եւ դեռ այլեւս չկրցաւ փորձել զանկող այս մասին:

Մերձակայ մենաստանի մը վանահայր ընտրուեցաւ, բայց իր խտրութիւնը այնքան անհաճոյ եղաւ վանականներուն, որ անոնք իրմէ աղատելու համար թունաւոր բաժակ մը ներկայացուցին իրեն: Բենեդիկտոս, յայտնութեամբ տեղեկանալով եղածին, խաչակնքեց բաժակը որ ճաթեցաւ կտոր կտոր եղաւ:

Յետոյ բաշտեցաւ նորէն իր առջի առանձնականը, ուր իրեն նմանիլ փափաքող շատ մարդիկ քովը եկան: Քիչ ատենէն, իր թողած մէկ վանքին տեղ 12 հաա հիմնեց: Անոնց տուաւ կանոնագրութիւն մը որ Սուրբ Հոգւոյն կողմէ, կերպով մը, ներշնչուած էր: Իր համբաւը օրէ օր աւելնալով, Հասմէն ծերակուտականներ եկան զինքը տեսնելու: Տէրաւազդոս անոր բերաւ իր եօթնամեայ երեք որդին Պլակիգոսը եւ Էքուրիկոս անոր յանձնեց: Սուրբ Մաւրսօրը Սուրբ Բենեդիկտոս անձամբ դաստիարակեց այս երկու աշակերտները, որ քիչ ատենէն մեծ սուրբիք եղան: Պլակիգոս Յիսուսի համար իր արեւնը թափեց, իսկ Սուրբ Մաւրսօր Թրաւնայի մէջ միաբանութեան երկրորդ հիմնադիր մը եղաւ:

Թեեւ Պլակիգոսի հայրը Սուրբակի երկրին տերն

էր եւ մենաստանին բարերար, բայց ինք, այս պատանի պատրիկը, ամէն տեսակ տնային ծառայութիւններ կը մտաւայանէր հասարակութեան, օրինակի համար խոհանոցը աշխատիլ, ջուր կրել եւ: Եւ օր մը երբ Ներոնի լիճէն ջուր բերելու գացած էր, սափորին ծանրութեանէն սահեցաւ ինկաւ լիճին մէջ: Սուրբ Բենեդիկտոս հրամայեց սուրբ Մաւրսօր, իր հաւատարմի՝ աշակերտին, որ վազէ երթալ տղան ջրէն հանել: Մաւրսօր, իր վարդապետին խօսքին վրայ, իսկոյն կը մեկնէ, եւ ընդունած հրամանին մասին վշտանալով եւ իր հաստատ քայլերով կ'ընթանայ ջրին վրայէն եւ Պլակիգոսը կ'ազատէ անդունդէն ուր սուզուելու վրայ էր: Ո՛րոշ րոպէ վերադառնալով քան մեծ հրաշք մը. հնազանդութեան ուժի՞ն թէ հրամանին զօրութեան: Մեծ խնդիր, կ'ըսէ Սուրբ Գրիգոր, Սուրբ Բենեդիկտոսի եւ Սուրբ Մաւրսօրի միջեւ: Բայց, զայս լուծելու համար, բռնեք թէ հնազանդութիւնը շնորհք կը բերէ պատուէրը կառարեւալու համար. հրամանն ալ շնորհք կը բերէ հնազանդութիւնը արդիւնաւոր ընելու համար: (Bossuet, Panegyrique de Saint Benoit.)

Դժոխքը, այսքան յաղորութիւններու վրայ զայրացած, ջանաց վերջ առնանց, փորենտիտոս անուանով նախանձատի մը միջոցաւ, որ նախ ահաւի զըրպարութիւններով յարձակեցաւ մեր Սուրբին վրայ: Զեաք զարկաւ վատթար հնարքներով կրօնաւորները շարութեան մղելու: Պէտք եղաւ որ Բենեդիկտոս տեղի տայ փորձորիկն տալեւ: Ուստի սուրբութեամբ հեռացաւ Սուրբակի ժայռերէն, որ նուիրաբարձուած էին իր ապաշխարութիւններով եւ այն տեղ գործած այնքան հրաշքներով: Երկու հրեշտակ, երկուստեքի կերպարանքով, տարին զինքը կասկած լեռք, Նեապոլոյ թագաւորութեան մէջ, Սուրբակէն 50 իսկ Հռոմէն 62 մղոն հեռու: Հրեշտակները Սուրբին յանձնեցին նոյն տեղը որ առաջ եպիսկոպոսարան էր եւ ապա եղաւ նշանաւոր արքայարան մը, կեդրոն այս Սուրբ Նախահայր հիմնած անթիւ անհամար մենաստաններուն: Այս լեռան վրայ եւ շրջակաները, ինչպէս նաեւ Իտալիոյ ուրիշ շատ մը գաւառներուն մէջ գեոհեթանոսութեան մնացորդներ կային, ի մէջ այլոց Ապոլոնի մէկ մեհեանը, ուր այս կռաւքը իբրեւ Աստուած կը պաշտուէր նոյն կողմի գիւղացիներէն: Ս. Բենեդիկտոս քառասուն օր առանձնութեամբ եւ ծածով տաքիւնութեան պատրաստուելէ յետոյ, ամիսէն առաջ այս մեհեանը կտրմանց, կռաւքը փչրեց, եւ այլեք մերձակայ փոքր տնտաւք որ հեթանոսական սնտոխտարութեանց կը ծառայէր: Մեհեանը մաքրելով օրրելով աղօթարանի վերածեց, եւ անուանեց զայն Սուրբ—Մարտիրոս: Ուրիշ մը կառուցանել տուաւ Յովհաննէս Մկրտիչ անունով: Այնուհետեւ եռուսդուն քարոզութիւններով ջանաց շրջափայլեցաւ ժողովուրդները գարձի բերելու, անձամբ եւ իր աշակերտներու ձեռքով:

ՀՈՒՍԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕՒԱԶՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՈՐ

(Շար.)

Չարիքը և անոր պատճառները հաստատելը բան մըն էր. բայց կարեւորը՝ անոր դարման տանելն էր։ Եկեղեցին իր երկար փորձառութեամբ և յարատեւութեան ոգով զոր իր հակառակորդներն իսկ կը խոստովանին, միշտ ջանադիր եղած է այս մասին։ Նախ և առաջ քիչցուցած է ընտրութեանց թիւը, և զանց ընել չկրցած տեղերը միայն պահած է դանոնք։ Եպիսկոպոսները, որ ատենով կ'ընտրուէին ժողովուրդէն, յետոյ իրենց կղերէն, ապա միայն իրենց Կանոնիկոսական ժողովէն, այժմ ընդհանրապէս Բարձրագոյն Քահանայապետին կողմէ կ'անուանուին։ Արդ, մեր խնդրին համար կարեւոր հետեւանք, ընտրութիւնները որչափ կը նուազէին, զանոնք կանոնաւորելն ալ այնչափ կը դիւրանար։ Դժուար չէ այս բանիս վերահասու ըլլալ։

Հաստատենք նախ թէ լոկ այս իրողութեամբ մենք որչափ հեռացած կը գտնուինք արդէն արդի ընտրական վարչութիւններէն։ Եկեղեցւոյ մէջ ընտրութիւնը փոխանակ ամէնուն վրայ տարածուելու և ընկերական կեանքին մեծ մշանակը ըլլալու գրեթէ վերածուած է միմիայն բարձրագոյն գլխին որոշողութեան։ Ասիկայ ընտրուած պետն է այնպիսի ընկերութեան մը, ուր յաւէտ ի գործ կը գրուի մեծին կողմէ ընտրութիւնը, ճշմարիտ ընտրականութիւնը (sélection), և ամենէն հիանալի ընտրականութիւնը, Եկեղեցական վիճակն ընդգրկող երիտասարդները, որոնք թէեւ նախ նոյն ինքն Աստուծոյ կը կոչուին, բայց պարտական են իրենց կոչումը իրենց մեծաւորաց հակակշիւին ենթարկել, կը մտնեն զգուշաւոր միջավայր մը, ուր ընտրական պայքարներն և առավելաբար ընկերութիւններու խռովութիւնները յիշեցնող բաներ գոյութիւն չունին։ Յաւէտ նահապետական վարչութիւն մըն է այն, ուր հասարակութեան հայրը, եպիսկոպոսը, կ'ընտրէ, յիշեցնող զգուշացուած խորհուրդ

զով, հոգեւոր որդիները զորոնք իրեն պիտի ընկերացնէ իբրեւ քահանաներ իր հովուական գործին մէջ։ Արդեօք այս կերպով իրօք ձեռք կը բերուի լաւագոյններու ընտրականութիւնը։ Ո՛չ միշտ, ապահովաբար. բայց կարծեմ թէ, կաթողիկէ ամբողջ կղերը, անկեղծօրէն քննողը պիտի խոստովանի որ այս խարհիս ոչ մէկ կողմը այնչափ մօտեցուած է նոյնին։ Եւ ահա արդէն այսքան խնամով ընտրուած պատուական անձերու մէջէն, նուիրապետութեան բարձրագոյն գլուխը մի քանի հոգի պիտի ընտրէ, իբրեւ ընտրողներ ծայրագոյն քահանայապետութեան։

Քահանայապետին անուամբ համար հարկ էր ընտրութեան դիմել, որովհետեւ ան իրմէ մեծ չունի։ Միայն կը մնար անկէ հեռացնել ամէն վտանգներ։ Ասիկայ եղաւ այս «յաջորդական և իրօք հիանալի զգուշութեանց ամբողջութեամբ»։ Ընտրողներուն ընտրութիւնն իսկ լուրջ երաշխիքներ կ'ընծայէր. հնար էր յուսալ թէ մեր ըսածին պէս պատրաստուած մարդիկ աւելի իրենց խղճին պիտի հետեւէին քան երկրաւոր նկատումներու։ Բայց ասով շատացուած չէ։ Այս խիղճն ալ խստիւ կապած են Աստուծոյ առջեւ՝ քուէն ամենէն արժանաւորին ստիւգ երգումով։ Սակայն արտաքին աշխարհի հրնարագրութիւնները դեռ եւս կրնային անոնց վրայ ազդել, մեքենան, ինչպէս կ'ըսէ Պուրժէ, կրնար գործին մէջ մտնել, այս վտանգն ալ պիտի հեռացուի կարգինալական պապըն, տիւր ժողովին (conclave) օրէնսդրութեամբ։ Կարգինալները ընտրութեան ամբողջ տեւողութեան միջոցին բացարձակապէս արգելափակ և գրտի հետ ամէն հաղորդակցութենէ անմասն կը մնան։

Կրնանք հիմայ տեսնել թէ Եկեղեցին ինչպէս, զգուշութիւններու ուժով, պիտցած է միառմի հեռացնել ընտրական վարչութեան սովորական թերութիւնները։ Ժառանգական միապետութեան ամենամեծ առաւելութիւններէն մին է փառասիրութիւններու առջեւ դռները փակել։ Թաղը, մշտնջենաւորապէս ընտանիքի մը աւանդուած ըլլալով, կուսակցութիւններու մրցակցութենէն զերծ կը

մնայ, Եկեղեցին, որ իր դրութեան մէջ չէր կրնար նոյն դադարարականը իրականացնել, զոնէ անոր շատ մօտեցած է: Փառասիրութեան դաշտը շատ անձուկ է և խաղն ալ կարի սահմանափակուած: Ժողովուրդները տակն ու վրայ ընող և անհաշտ կուսակցութիւններ ստեղծող պայքարները արտաքսուած են անկէ:¹

Այս կերպով կը մօտեցուի նաեւ ժառանգական միապետութեան ուրիշ մէկ առաւելութեան, որ է իշխանութեան փոխանցման դիւրութիւնը: «Ժողովուրդեան համար բարիք մըն է, կը գրէր Պոսիւէ, որ կառավարութիւնը հեշտ ըլլայ, որ տեւէ միշտ այնպէս ինչպէս կը տեւէ մարդկային ազգը, և ընթանայ, այսպէս ըսենք, բնութեան հետ...: Ժողովուրդը իբրեւ առաւելութիւն մը նկատուելու է իր վեհապետը բոլորովին պատրաստուած գտնելը, և այսքան մեծ մղանակ մը, այսպէս ըսենք, լարելու հոգին ազատ ըլլալը»:² Եկեղեցւոյ մէջ, անշուշտ պէտք է այս մեծ մղանակը լարել, բայց գոնէ ժողովուրդը չի խառնուիր. մի քանի ծերունիներ, առանձնութեան և լուսութեան մէջ փակուած՝ զործը ի գլուխ կը հանեն, և

քրիստոնեայ ընկերութիւնը ու է կերպով չի վրդովիր:

Ասով առջեւը առնուած կ'ըլլայ նաեւ մեծ մասամբ՝ ընտրական վարչութեան ամենածանր վտանգներէն մէկին՝ օտարին միջամտութեանը: Երբ վեհապետները որդի ի հօրէ իրարու յաջորդեն, առանց հնարադրութիւններու և նենգութիւններու կարելիութիւն տալու՝ ինչպէս միջամտելու առիթ կը գտնուի: Ուրիշ է երբ ալմիայոյ ընտրութիւններ կը գրգռեն, իրարու դէմ կը հանեն նախանձընդդէմ կուսակցութիւնները: Ազմուկին և խռովութեան միջոցին, օտարը կրնայ աղէկ խաղ խաղալ, և իր ազդեցութիւնը բանեցնելու այնչափ աւելի կը յաջողի, որչափ որ վարչութիւնը աւելի ռամկավարական ըլլալով, ընտրող մարմինն ալ աւելի բազմաթիւ, նուազ լուսաւորեալ, նենգութեան և գոհիկ փորձութիւններու աւելի ենթակայ ըլլայ: Եկեղեցւոյ համար, օտարը՝ աշխարհական իշխանութիւնն է, որուն կրօնական գործերու միջամտելու առիթները ձեռքէ չփախցնելը ծանօթ է ամէնուն: Ուստի խնդիրը ամէն գնով զայն հեռացնելու վրայ էր: Այս բանին հասնելու համար շատ ձիգեր թափել հարկ եղաւ, բայց այս կողմէն ամենէն ուժգին հարուածը տրուեցաւ 11երորդ դարուն, այն հազարի կուսին մէջ ըոր Գրիգոր է: Մղեց կայսերական յափշտակութեանց դէմ: Մինչեւ այն ստեղծեալ Քաջանայսպետին ընտրութիւնը յանձնուած էր Հռոմի կղերին և ժողովուրդին, ինչ որ շատ խռովութիւններու առիթ տուած էր և նպաստած էր իշխաններու միջամտութեան: Ինչ միջոց ձեռք առնուեցաւ նոյնին անկախութիւնը աւելի եւս ապահովելու համար: ընտրողներուն թիւը սահմանափակուեցաւ. այն ժամանակէն սկսեալ ընտրութիւնը յանձնուեցաւ մի միայն կարդինալներուն:³ Ապա, 13երորդ դարուն, այս նոր

